



42. ՓԱՀԼԵՎԱՆ ՀԵՐ ՈՒ ՏՂԱ¹

Ավալ ժամանակին ըլնում ա շիլնում մի բեզրդյան: Էս բեզրդյանը մի փահլեան նոքար ա ունենում, էնքա՛մ դոշաղ, էնքա՛մ հունարով, որ արար աշխար տակն ու վրա անեիր, ման գայիր՝ նրա հատը փահլեան շիր գոնի: Խ'չ դվաթով փահլեանի հեննա ասես կոխ էր պրծե՛ ընշանք օրս նրա մեջքը գեննին չէր դիակ, էնքա՛մ դոշաղ էր:

Էս փահլեանը մի մինումար տղա ա ունենում, բերում ա սրան պսակում, օխտն օր, օխտը զշեր հարսանիք անում: Սա էլ հոր նման դոշաղ ա ըլնում:

Գալիս ա մի վախտ, էս փահլեանը ծերանում ա. կանչում ա տղին.— Ա՛յ որդի, — ասում ա, — տենում ես իմ հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յս ա մնացե. արի՛ հմի էլ դո՛ւ գնա բեզրդյանին նոքար:

— Լա՛վ, ա՛յ հեր, — ասում ա տղեն, — ո՛ր ասում ես՝ կէթամ, խի՛ շեմ էթա:

Վեր ա կենում, էթում բեզրդյանին նոքար:

Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը բեզրդյանը նոքարին կանչում ա:

¹ Տպագիր տեքստում հերիաթի վերնագիրը բանահավաքը չնշել և գրել է «Հալալը հարամող, հալալը շնարամող կնաեիք» (Մ. Կ.):

— Էլիթաս, — ասում ա, — մի քանի ամսվա ճամփի թաղարեք կտենաս, որ էզուց պար էթամ Երուսաղեմ ուխտ:

— Աշքիս վրեն, բեղրգլա՛նը սաղ ըլնի, — ասում ա նոքարը: Էթում ա, ինչ որ ճամփի հմար պետքն էր՝ հաց-մաց, աման-չաման, ես ինչ դիտամ, շաղիր, մախլաս՝ ինչ որ պետքն էր, բերում ա կապոտում, հաղիր անում: Էդ գշեր քնում են, հետի օրը, բարըլսի հեննա բեղրգյանը, ինքը, իրա կնիկը վեր են կենում ընկ-նում ճամփա:

Էթում են, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, ոշերը մի տեղ վեր են դալի, շաղիր տալի, որ մի քիչ հաց-մաց ուտեն, դինջանան, կենան ընշանք լիսանա, էլի վե կենան էթան իրանց ճամփեն: Լիսը բացգում ա թե չէ նոքարը վեր ա կենում, տենում իրա կնիկը չկա: Դե՛ս կնիկ, դե՛ն կնիկ, ման ա գալի՛ չի դտնում: Գալիս ա բեղրգյանին իմաց տայի:

— Բեղրգյա՛նը սաղ ըլնի, — ասում ա, — բա չե՞ս ասի՛ ըսե՛նց, ըսե՛նց բան. Էս ոշեր էկել են կնկանս փախցրե, տարե. իզին տո՛ւ էթամ աշխարե աշխար, երկրե երկիր ման գամ բալի գտնեմ, բերեմ:

— Դո՛ւ դիտաս, — ասում ա բեղրգյանը, — էթում ես՝ գնա՛, մեղքն ու վարձքը քու շլինքը, համա ասսու կշտին շարթ ըլնի, թե ե՛ս թեզ զնացի Երուսաղեմ էկա՞ ե՛ս իմ շաղիրը ըստե վե տամ, կե-նամ ընշանք գաս, թե դո՛ւ ինձանից թեզ էկար՝ դո՛ւ կենաս, ընշանք իմ գալը ևա՞վ:

— Լա՞վ, — ասում ա, — բեղրգյա՛նը սաղ ըլնի:

— Դե հմի մուրախաս ես, գնա՛. աստոծ քեզ բարի ճամփատա, բարո՞վ էթաս, բարո՞վ գաս:

Տղեն ասպարավորվեց, նի էլավ ձին, բեղրգյանի հեննա մնաս բարով արեց, մի ճամփա բռնեց՝ գնաց: Գնաց, գնաց, շա՛տ գնաց, քի՛շ գնաց, տեհավ էդ ճամփի վրեն ձիու ոնների տեղեր ա մա-լում անում:

— Երևում ա, — ասեց, — ըստիան ձիավոր ա անց կացե:

Էդ իզը բռնեց՝ գնաց. ասեց. «Տենամ ո՞րդի ա կտրվում»: Գնաց, գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, էկավ ճասավ մի շաղիր, էն սհաթը ձիուցը վեր էկավ, ձին շաղրի դռանը կապեց, մտավ շաղիրը, տեհավ մի մարդ ընդե նստած:

— Բա՛ր՝ ազողում, ա՛ղպեր, — ասեց:
— Բարո՛վ, հազա՞ր բարին, — ասեց շաղրատերը:
— Դոնալ շե՞ս ուզի:
— Խի՞ շեմ ուզի, դոնաղն ասսում ա: Էդ ո՞ւր ես էթում, —
հարցրեց շաղրատերը:

— Բա՛ շես ասի՛ հալ նաով ըսե՞նց, ըսե՞նց բան. Փլա՛ն տեղը,
ֆլա՛ն բեզրգյանի հեննա շաղիր ինք տվե՞, գշերը կացե. լիսացավ
թե չէ, վե կացա տեհա կնիկս շկա: Դե՞ս ման էկա, գե՞ն ման էկա,
ի՞նչ արի, շարի՛ շգտա ո՞ր շգտա: Հմի էթում եմ կնկանս հավարին
աշխարհ աշխարհ, երկրե երկիր ման գամ, բալի դտնեմ, բերեմ:

— Տղա՛, — ասեց շաղրատերը, — էդ ճամփին, որ էթում ես,
շատ դժար ճամփիա ա, էթողն էլ եդ չի գալի. գիտաս խի՞:

— Խի՞, — հարցրեց տղեն:

— Ա՛սեմ: Հերս աղաք մենծ երկրի, թագավորությունի տեր
էր: Մենք մի Քոսա նոքար ունեինք. Քոսա մի՛ ասի, մի զուզում
ասա՞՛ սաղ աշխարքը ձեռին դողում էր՝ ընե՞նց մի ազրեհիլ տղա-
մարդ էր: Էկավ մի վախտ, էդ Քոսեն մեզ մեր երկրիցը, տում ու
տեղիցը քշեց, ի՞նքը նստեց ընդե թագավոր: Էդ Քոսեն, — ասեց, —
մեր մհալումն էլ կնիկ չի թողե՞ էկել ա փախցրի, տարի շինն իրան
կնիկ: Որ սուտ շասեմ, ով գիտա ճմի նա թամամ հազար կնիկ կու-
նենա. կա, շկա՝ կնկանդ փախցնողն էդ Քոսեն ա, էլ մարդ չէ: Քե-
զանից դոշադ, շահել-շիվան տղամարդիկ են էկե էս ճամփովն անց
կացե, համա դեռ հա էն ա, որ պտի եդ գան: Զոմքի էդ Քոսեն մի
ընենց քամու ձի ունի, որ մի տարվա ճամփեն մի օրումն ա էթում.
Է՛, էլ դրա ձեռիցը իսանառո՞րդի կպրծնի: Դու արի՛, — ասեց, — ա՛յ
տղա, եդ դառ, մեղք ես, շահել-շիվան ես՝ գնա՞ քու արկի ձենն ածա:

— Ձէ՛, որ չէ, — ասեց տղեն, — ինչ ուզում ա ընի՞ պտի էթամ,
ո՞ր պտի էթամ: Ձըհանդա՞մը գյոռը, մի օր էլել եմ, մի օր էլ պտի
մեռնեմ:

Զաղրատերը տեհավ, որ չէ, տղեն մի հետ պահին ա կաննե, չի
ուզում եդ դառնա. — Տղա՛, — ասեց, — մի բան ասեմ անկաշ կա՞նես:

— Խի՞ շեմ անի, ասա՞ տենամ:

— Մերս, — ասեց, — էդ Քոսի կնանոցը լեղացնող, մուղաթ կե-
նողն ա, հրես ա՛ռ էս մատանիքն ու աղլուխը նշանաբան. կտանես
մորս, կասես, «Տղեդ ա ղրկե»: Թե անի, բալի էլի նա մի ճար անի
քեզ, թե չէ իմաց կաց՝ էթալդ կըլնի, գալդ շիլնի:

Եննաց մի քլահլան ձի բերեց, տվեց իրան:

— Էս ձին որ կա, — ասեց, — էդ ճամփովը շատ ա գնացե էկե-
կնիլինես, հենց դլամբ բաց կթողաս՝ քեզ կտանի դուզ Քոսի ամա-
րաթի աղաքին վե կրերի:

Տղեն մատանիքն ու աղլուխն առավ, դրեց չերը, իրա ձին թո-
ղաց ընդեն, նրա քլահլան ձին նի էլավ, ընկավ ճամփա: Գնաց,
գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, ոչեր գնաց, ցերեկ գնաց՝ մի՛
օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, ի՛րեք շաբաթ,
մայլասի՝ մի ամիս՝ հասավ Քոսի ամարաթը: Զիուցը վեր էկավ,
դուռը ծեծեց, մի պառավ դուս էկավ:

— Ո՞ւմն ես ուզում, — հարցրեց պառավը:

— Ֆլա՛ն շաղրատիրոն մորը, — ասեց տղեն:

— Հենց ե՛ս եմ, — ասեց, — տենամ ինչ ես ուզում:

Տղեն հանեց նշանաբանը, տվեց պառավին, ասեց. — Թու տղեն
աղրկե, — ու մին-մին նազլ արեց, թե՛ ըսե՛նց, ըսե՛նց ըան:

— Լա՛վ, — ասեց պառավը, — ինչ որ ձեռիցս կզա կանեմ, շեմ
խնայի. նրանից դենը դու գիտաս, դոշաղ տղա ես՝ Քոսի ձեռիցը
կպրծնես, թե չէ հո՛ իմա՛ց կաց մենծ թիքեն անկաշդ կթողա: Հրես
էզուց, — ասեց, — հինգշաբթի ա, Քոսի կնանոնցը պտի տանեմ լե-
զացնեմ, դու էլ մեր ենուցը վե կա՛ց արի: Ես մի մհանով, — ա-
սեց, — կնկանդ զրադ կկանչեմ, կխոսացնեմ, դու էլ մտիկ շես տա,
կքաշես թարքդ՝ լա՛լա:

— Լա՛վ, — ասեց տղեն, — ոնց որ ասեցիր՝ ընենց կանեմ:

Հեգոսի օրը, պառավը Քոսի կնանոնցը աղաք արեց, տարավ լե-
զացնի: Ամարաթիցը մի քիչ հեռու լավ-լավ հավըզներ կային, ամեն
շաբաթ նրանց բերում էր ըտե շին-շին լեղացնում, եղ բերում ա-
մարաթը:

Ճամփին պառավը էն տղի կնկա հեննա եղ մնաց մեկելների-
ցը, նրան խարեց, թե թաքուն բան ա ուզում ասի: Տղեն ձին նի
էլած, հտեներիցը բուառն էր պահում. հենց էս տեհավ թե չէ, ձին
վրա քշեց, կնկանը քաշեց թարքը, ձիու գլուխը բրախ տվեց ու
լա՛լա:

— Հարա՛յ, հարա՛յ, հարա՛յ, էկե՛ք, հասե՛ք. Քոսի կնկանը
փախցրին, տարա՛ն, — ձեն տվեց պառավը: Սաքի թե, որ ասես՝
ինքը բանից խարար չի:

Կնանիքն ընշանք կիտվեցին տղեն իրա մանգղին առավ: Խեղ-

ճերի համամները գլխներին հարամ էլավ. բիրադնով եղ դառան, էկան՝ ամարաթը: Տղի բախտիցը Քոսեն մենծ քուն էր մտե, շնթռկե, մարդ սիրտ չէր անում էթա վե կացնի, շունքի քառասուն օրը դեռ հլա չէր թամմե: Կացան ընշանք թամմեց, նոր որ Քոսեն քնիցը վե կացավ:

Պառավը գնաց ասեց.— Թա չե՞ս ասի՛ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, կնկանդ փախցրին տարան, ճար ունես՝ տե՛ս:

— Ղո՞րթ:

— Ղո՞րթ:

— Ո՞ր դհովը տարան:

— Է՛ս դհովն, — ասեց պառավը, դաստի ուրիշ դիճ շանց տվեց, որ տղի եննուցը շկարենա հասնի:

Քոսեն թռավ ձին, յա՞լլա: Դե՞ս քշեց, դե՞ն քշեց, տեհավ մի ճամփի վրա հրեն մինթանի կտորտանք: Տղեն կնկանը որ փախցրել էր, որ մի ասի՛ կնիկը թաքուն մինթանի փեշը ճղի, շաղ տա ճամփին, որ Քոսեն իմանա իրան դվո՞րն են տարե, գա հավարին հասնի:

— Թա՞ս, — ասեց Քոսեն, — դեսն են տարե:

Էս ճամփեն բռնեց՝ գնաց: Գնաց, գնաց, կես սհաթումը տղի եննուցը հասավ:

— Հո՞զածին, — ասեց, — ո՞նց ես մենծ թիգեն անկաշդ թողամ: Կնիկս տա՞լիս ես, թե չէ:

— Սելը գոռալու տեղ՝ սե՞լվորն ա գոռում, — ասեց, — էկել ես կնկանս փախցրե հերիթ շի, դեռ հլա դո՞ւ ես մենծ-մենծ խոսում: Ուզո՞ւմ ես, — ասեց, — ա'րի կովենք, ով ում ախտեց՝ նա նրան սըպանի:

— Լա՞վ, արի՛ կովենք:

Էս ասեցին թե չէ, հասան իրար: Տղի վրա պրծնիլն ու Քոսին ախտիլը՝ մին էլավ:

— Էսթա՛վուր շի, — ասեց Քոսեն, — արի ձիանոնցից վե գանք, կոխ պրծնենք. ով ում գեննովը տվեց, նրա արինը նրան հալալ ըլնի: Ղա՞րու ես:

— Ղա՞րու եմ, — ասեց, — արի հմի էլ կոխ պրծնենք:

Կոխ պրծան: Ջա՞նըմսան տղեն, Քոսին որ շվեկալավ բոյովը մին գեննովը տվեց՝ բրդկոնը բերնովը դուս էկավ: Կնիկը տեհավ, որ Քոսի բանը բուրդ ա, ինքն էլ մի դհիցը վրա հասավ, ինչ հալով Քոսին տակիցը հանեց՝ քցեց տղի վրեն: Էս հետ էրկսով տղին

վե կոխեցին, ձեռ ու ոտք կապեցին։ Ամառվա էն ճըռճըռան շոքին էր։ Բներին եռման ավաղը քանդեցին, տղին ընչանք ճիտը միշին թաղեցին, իրանք գնացին ծառի հովը, որ մի քիչ բնեն, դինջանան։

Խեղճ տղեն շոքու պատռում էր, լերդ ու շիգարը էրվում, փոթոթվում, մի պուտ ջուր էր ուզում, տվող շկար, խմեր՝ սիրուց հովանար։ Ասենք նրանց կշահին մի կուժ ջուր կար, համա խեղճի ձեռ ու ոտք կապած ին, չէր կարում էթա, վեր ունի՛ խմի։ Ըսենց կացավ մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ՝ տեհավ էն դհիցը սարը ճղվեց, մի երա վիշապ դոււ էկավ ընդիան ու դո՛ւզ դպա իրան։

— Փա՛ռք քեզ, աստոծ, փառքդ շա՛տ ըլնի, — ասեց տղեն, — ևս խաթիցը չպրծած՝ թաղա խաթի մեջ ընկա։

Համա մնաց արմացած, որ տեհավ վիշապը գնայ, կուժը բերեց տվեց իրան։ — Խմա՛, ինչքամ ուզում ես, — ասեց։

Զաթի ժարավ թուքը-մուքը կպել էր. առավ, քաշեց բերնին, մի կո՛ւշտ խմեց, եդ տվեց վիշապին։ Վիշապը տարավ դրեց էլ եդ նրանց կուշտը, բերանը բաց արեց, մի էրկու կաթ յաղու ածեց կժի մեջը, էլ եդ գնաց քաշվեց սարը։ Տղեն մնացել էր սառած մտիկ անելոն։

Մի վախտ թոսեն քնատեղիցը վե կացավ, կուժը վե կալավ, տղին ճիճիկ տալոն դրեց բերնին խմեց։ Դե միշին յաղու կար, է՛լի խմելու բաշտան՝ տրաքվեց, մեշտեղիցը էրկու¹ էլավ։ Կնիկն էս տեհավ թե չէ, վաղեց քոսի թուրը հանեց, վրա հասավ, որ տղին սըպանի։ Նո՛ր տղեն աղաշանք, պաղատանք։

— Ա՛յ կնիկ, — ասեց, — խի՛ ես ինձ մովսաննաթություն անում, չէ՞ ես էլ քու մարդն եմ։ Արի՛, — ասեց, — ձեռ ու ոտս եդ արա, էլի ես քեզ մարդ, դու ինձ կնիկ։ Էթա՛նք զլխներս դինչ ապրենք։

Կնիկն ալատաց մարդի խոսքին, ձեռ ու ոտք եդ արեց, նի էլան ձիանիթը՝ էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, հասան էն շաղրատիրոնչ կուշտը։ Նի մտան շաղիրը, տեհան շաղրատերը ընդե նստած։

— Թա՛րով, — ասեց տղեն։

— Ա՛յ դու բարո՛վ, ասսու հազա՞ր բարին, խերին, — ասեց շաղրատերը։ — ամեն ճամփեդ սալամա՞թ, Դու էն ասա՞ տղա՞ ես, թե աղջիկ։

¹ Տպազիր տերստում այս բառի փոխարեն եղել է՝ երկու, ուղղումը բանաշավարինն է (Ս. Կ.)։

— Տղա՛ եմ, — ասեց, — գնացի, Քոսի հեննա կոփվ արի, ախ-
տեցի, կնիկս ձեռիցը խլեցի, բերի:

Եղ գշեր դրա կշտին կացան, տղեն մին-մին նազլ արեց՝ ո՞նց
գնաց, ի՞նչ արեց, ի՞նչ շարեց, մախլաս՝ ամեն բան տեղը-տեղին
ասեց: Նստեցին, էրկեն ու բարակ զրից արին, մասլահաթ արին,
եննա թեք ընկան քննեցին: Լիսը բացվեց թե չէ, տղեն շաղրատիրոնչ
ձին տվեց նրան, իրա ձին նի էլավ, կնկանն էլ Քոսի ձին նի հանեց,
ընկավ ճամփատ:

Էկավ, էկավ, էկավ, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ,
էրկու շաբաթ, իրեք շաբաթ, տեհավ, է՛, հրեն մի սարի դոշի մի
շաղիր: Ալրիալը ճանանչեց, որ բեղրգյանի շաղիրն ա:

— Բա՛ս, — ասեց, — Երուաղեմից եղ ա էկե, իմ ճամփեն ա
պահում: Էկան հասան շաղիրը, ձիանոնցից վեր էկան, բեղրգյանին
գլուխ տվին, ընդե կաննեցին:

— Ամեն ճամփեդ սալամա՛թ, — ասեց բեղրգյանը, — զի ասա
տենանք ի՞նչ արիր, ի՞նչ շարիր. ո՞ւր գնացիր, ո՞ւրդե գտար կնկանդ:

— Բեղրգյա՛նը սաղ ըլնի, — ասեց տղեն, — բա չե՛ս ասի՛
ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան: — Նստեց մին-մին նազլ արեց, ոնց
որ ես ձեզ նազլ արի:

Բեղրգյանը էս որ իմացավ, բերեց կնկանը մի դաթրի պոշից
կապեց, որ տանի սա՛րով, քա՛րով, քո՛լով տա՝ մենծ թիքեն ան-
կաշը բերի:

Հեգուի օրը շաղիրը հավաքեցին, էկան իրանց երկիրը: Բե-
ղրգյանը ըստե տղի հմար թագաղան մի սի՛րուն, նա՛շխուն աղջիկ
ուզեց, պսակեց, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց:

Գա՛նք հմի խարար տանք նրա հորիցը:

Նրա հերը դեռ հյա սաղ էր, համա դառը-տխուր, ընշանք վերջը
նոթերը կիտած, ըսկի մարդի հեննա չէր խոսում: Բեղրգյանը ի՞նչ
անում էր, ինչքամ հարցնում: «Ախսար ասա՛ տենամ՝ դարտդ ի՞նչ
ա, է՛», չէր ասում: Մի օր էլ շատ որ զոռեց, էս հետ նրա խաթ-
րիցը շկարաց անց կենա:

— Բեղրգյա՛նը սաղ ըլնի, — ասեց, — աղաք մի գյուրզս բերիլ
տո՛ւ, եննա կասեմ դարտս:

Բեղրգյանը էն սհաթը հրամայեց, որ էթան զյուրզը բերեն տան
իրան, Գնացին, իրեք, չորս ֆուով անշախ ճըռընչալոն բերին՝ էն-

քա՛մ ծանդրն էր: Համա փահլեան հերը մի ձեռով գյուրզը վե կա-
լավ, մանների վրեն հաղացրեց.

— Բոշ ա,— ասեց, — ծերացել եմ. էլ հալ չի մնացե վրես:
Ես, — ասեց, — աղաք շատ դուշաղ ի. Համա գլխովս մի բան անց
կացավ, նրանից գեսը զուդումս կտրվել ա: Իմ հաւըլ նո տեհար
ո՞նց իրա հալալը հարամեց, մարդին մովսաննարություն արեց. էն
օձը ջրներ, Քոսի հեննա պտի սլպանեին նրան, բողային ընդի,
զուրդ ու զուշի կիրակուր անեին, էն դիմը կաննեին: Համա կեանիքը
քոմմա նո բանց չեն. մի ժանի տարի աղաք ես մի հալալ կարնա-
կերի ուստ էկա, որ արար աշխար ման զայիր՝ նրա հատը չիր գրտ-
նի: Հըմի բեզրզյանը սա՞ղ ըլնի, ֆեզ նաղլ անեմ՝ ո՞նց ուստ էկա
էդ բասրով, դոշաղ կնկանը ¹:

Մի հետ, — ասեց, — ձիս նի էլած, ասպարավորված, էս գյուրզն
էլ ձեռիս ճամփա ի էթում: Միսելի տեղ զնացի, տեհա էն դիմը մի
ձիավոր դուս էկավ: — Թա՛ր՝ աշողում, աղաքեր, — ասեցի: — Զեն չա-
նեց, ո՞ր ասես եդ էլա մտիկ շտվեց, տենա ո՞վ եմ, ո՞վ չեմ՝ հենց
մի զլուի ձին քշում էր: Ինձ ու ինձ միտք արի. «Ես, — ասեցի, —
էսքամ զոշաղ փահլեան ըլնեմ, ո՞նց թի նա ինձ մարդատեղ լգնի,
բարովս էլա շառնի՛: Ասեցի ու գյուրզս ետեկիցը շպոտեցի. Համա
մնացի զարմացած, որ տեհա գյուրզս դիպավ՝ քյար շարեց. նա ըսկի
տեղիցն էլ ժաժ էկավ: Ասեցի՝ մի հետ էլ տամ տե՞նամ: Զիուց վեր
էկա, զյուրզս վե կալա, մի զըրք էլ հասցրի՝ էլի ժաժ էկավ: Համա
մըն էլ որ քշեցի, էս հետ նա ձիու զլուիս շուռ տվեց, քշեց դպա
ինձ: Էկավ անկաջիցս բռնեց, ընենց մի զիլ քաշեց, որ մնացի տեղն
ու տեղս շըշմած, վախլությունից թուքը-մուքս կպավ՝ էլ ձեն, ծըպ-
տուն շաննեցի: — Իմ հետեկիցն արի, — ասեց ձիավորը: Գնացի: Գնաց,
զնաց, զնաց՝ մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, էկավ, մի ամա-
րաթի կշտի վեր էկավ: — Զիուցդ վե՛ր արի, — ասեց: Վեր էկա:
Ձիավորը շիրիցը հանեց տասը տասնէրկու թարլամեխ, տվեց ինձ: —
Ա՛ռ բստոնք, — ասեց, — վե տու էս ամարաթի պատին, որ ես նիլեմ
վիրեւ: — Ծարս ինչ. ի՞նչ ասեր՝ պտի անեի, մի հետ աշքս վախեցել
էր: Զեսիցն առա, զնացի մի եքա քար բերի, որ վե տամ: Թըրը՛խկ
հա թըրը՛խկ, թըրը՛խկ հա թըրըխկ, թըրը՛խկ հա թըրըխկ՝ ինչքամ

¹ Եղատառով ապված ամբողջ պարբերությունը տպազիր տեհատում բացա-
կայում է. ավելացված է բանահավաքի ձեռքով (Ա. Կ.):

արի, չէլավ, չկարացի վե տամ: Տեհավ, որ շեմ կարում, էկավ եր ձեռիցս առավ, զըմսկով մի դըրք տալու բաշտան՝ վե տվեց պատին: Ըսենց դըմսկով մի դհիցը մեխն էր վե տալի, մի դհիցը նիլուում վիրու, վե տվեց՝ նի էլավ, վե տվեց՝ նի էլավ, վե տվեց՝ նի էլավ, ընշանք հասավ ամարաթի՝ անգլուիր: Մի դաֆիլ հարայ-հրոցի ձեն ընկավ անկաշս. հենց իմանաս ընդե իրար կոտորում ին: Անց կացավ մի քանի վախտ, նա էլի էն մեխներովը վեր էկավ, նի էլավ ձին:— Ճեննես արի', — ասեց: Գնացի: Էդ ձիավորը գնաց, գնաց, մի գերեզմանի կողքի կաննեց, ձիուցը վեր էկավ, ձեռով էդ գերեզմանը քանդեց՝ տեհա միշին մի մեռել:

— Տե՞նում ես էս օլուն, — ասեց ձիավորը, — սա իմ մարդն ա: Ասենք ես տղամարդի շորեր եմ հագե, համա ես տղամարդ շեմ՝ կնիկարմատ եմ: Սրանից մի ամիս աղաք, — ասեց, — մեր գուշմաններն էկան որ ինձ փախցնեն տանեն, մարդս լթողաց, հետները կոիլ արեց. նրանք տվին մարդիս սըպաննեցին: Նրանից դեսը ես ասսուն աղաշանք արի' ինձ էնքամ զվաթ տա, որ մարդիս ինազը հանեմ՝ եննա ֆողիս առնի: Ըսօր որ էն ամարաթի զլովսը նի էլա՝ մարդիս սըպանողներին էլ ես սըպաննեցի: Սրանից դենը, — ասեց, — ինձ ապրիլը հարամ ա կացե, ես էլ պտի էթամ մարդիս կուշտը: Քեզանից մենակ խնդիրքս էս ա, որ ինձ մարդիս կշտին թաղես: Զի՞ս, ասպա՛րներս քեզ եմ բաշխում, մնա՛ս բարով:

Էս ասեց թե չէ, թուրք հանեց, կոխեց իրա սիրտը, ընկավ մարդի գերեզմանի վրեն, ընդե տեղն ու տեղը դինշացաւի: Ես էլ ափալ-թափալ ֆողը վրա տվի, նրան ընդե թաղեցի: Թողի էկա: էն օրվանից դեսը աշքս շատ ա վախսեց. գշեր, ցերեկ էլ դնշում շունեմ՝ հենց սրա վրեն եմ միտք անում...:

Թեզրդյանը նո՞ր իմացավ, թե էսթավուր դոշաղ փահլանը խի-պտի է՛սքամ դեն ընկնի:

